

«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՐՈՐԴ ՄԻԶԿՐՈՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 7-9-ը Սպամբուլում փեղի ունեցավ «Խաղաղություն և հանդուրժողականություն» խորագիրը կրող երկրորդ միջկրոնական կոնֆերանսը, որին մասնակցում էին կրոնական առաջնորդներ աշխարհի փարբեր մասերից, այդ թվում նաև՝ Ալեքսանդրիայի Նույն Ուղղափառ Եկեղեցու Թեոդորոս Բ Պապրիարքը, Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Անաստասիոս Արքեպիսկոպոսը, Կ.Պոլսի հայոց Պապրիարք Ամենապատիվ Ս. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը, Ռաբբի Արթուր Շնայերը՝ Նյու Յորքից, Թուրքիայի Գլխավոր Ռաբբին, Կովկասի, Ադրբեջանի և Բալկանների մուսուլման առաջնորդները, Թուրքիայի Կրոնի գործոց նախարարը, Նուստրանի Կրթության և Կրոնի գործերի նախարար Մարիեպա Գիանակուն, որն ընդգծեց կոնֆերանսի կարևորությունը՝ ասելով. «Այն գործը, որ Պապրիարքարանը կատարում է Վարիկանի, մուսուլմանների և այլ կրոնների, նույնիսկ Դալայ Լամայի հետ համագործակցաբար, շատ մեծ քաղաքական կարևորություն ունի»:

Գարեգին Բ Ամենայն Տայոց Կաթողիկոսի բարձր փնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այդ կոնֆերանսում ներկայացնում էր ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Կոնֆերանսի ընթացքում ընթերցվեցին նաև Բենեդիկտ ԺԶ Պապի, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բոֆի Անանի, Եվրոհանձնախմբի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուի ուղերձները իրենց ներկայացուցիչների կողմից:

Առաջին նման կոնֆերանսը՝ «Խաղաղություն և հանդուրժողականություն» խորագրով, փեղի է ունեցել 1994 թ. Սպամբուլում, դարձյալ Տիեզերական Պապրիարքության նախաձեռնությամբ: Այն ավարտվեց մի հայտարարությամբ, որն ընդգծում էր քաղաքական և կրոնական առաջնորդների պատասխանատվությունը՝ «օգտագործելու բոլոր միջոցները՝ երկխոսություն սկսելու բոլոր ազգերի և կրոնների միջև՝ փոխադարձ վստահություն, սեր և հարգանք սերմանելու նպատակով», ինչպես նաև այն, որ «կրոնի անունից կատարված հանցագործությունը մեծագույն հանցագործությունն է՝ կատարված կրոնների դեմ»:

Ենթյա կոնֆերանսը նվիրված էր միջկրոնական համագործակցությանը՝ խաղաղություն հաստատելու Նարավ-արևելյան Եվրոպայում, Բալկաններում և Կենտրոնական Ասիայում, շրջաններ, որտեղ վերջին ժամանակներում կրոնական հակամարտություններ են եղել:

Քրիստոնյա, հրեա և մուսուլման առաջնորդները հաստատեցին, որ կրոնական առաջնորդները պարտավոր են հաշտության և խաղաղության ձայն հնչեցնելու և ոչ թե կրոնական բախումներ հրահրելու:

«Խղճմարանքի կոչ» Նիմադրամի նախագահ Ռաբբի Արթուր Շնայերը ասաց, որ կոնֆերանսի երկու հիմնական նպատակները պետք է լինեն՝ սրիպել կառավարություններին

վարահեցնելու, որ անհանդուրժողություն չքարոզվի դպրոցներում, և ընդդիմանալու այն կրոնական առաջնորդներին, որոնք բռնություն են հրահրում, և մեկուսացնելու նրանց որպես «սոցիալական բորոպներ»:

Բարդուղիմեոս Ա Պապրիարքը շեշտեց, որ կրոնական առաջնորդի վրա չպետք է ազդեն ո՛չ զգացմունքները և ո՛չ էլ մոլեռանդությունը: Նա իր դպրոցությունները չպետք է դիպարկի որպես Աստուծո կամք:

Կոնֆերանսի ավարտին մասնակիցները հանդես եկան հայտարարությամբ, որում ի մասնավորի ասվում է. «Որպես Աբրահամի զավակների հոգևոր առաջնորդներ՝ մեր պարտավորությունն է՝ վերացնել ազգային և կրոնական լարվածությունները: Այս ոգով մենք կոչ ենք անում բոլոր հոգևոր առաջնորդներին՝ քարոզել, ուսուցանել և դրսևորել սեր, հանդուրժողականություն և ընթրնում միմյանց, այլադավանների և այլազգիների նկատմամբ իրենց եկեղեցիներում, մզկիթներում և սինագոգներում, իրենց ընտանիքներում, դպրոցներում և ճեմարաններում: Նաև պետք է պարասուխանարվություն կրենք կրթելու, սնելու և աջակցելու մեր համայնքների բոլոր անդամներին՝ կանանց և տղամարդկանց, երիտասարդներին և ծերերին՝ հորդորելով նրանց՝ ջանքեր գործադրել վարահեցնելու, որ անցյալի վիրավորանքներն ու հակամարտություններն այլևս չեն կրկնվի:

Վերջերս Նարսի-արևելյան Եվրոպան արձանագրեց նշանակալի դրական զարգացումներ փոխադարձ երկխոսության, հաշտության և համագործակցության ուղղությամբ: Մենք ընդունում ենք ՄԱԿ-ի և ԵԱՆԿ-ի կարևոր, շարունակական և աճող գործունեությունը և ողջունում ենք նրանց արձանագրած առաջընթացը: Այնուամենայնիվ, դեռևս լուրջ խնդիրներ կան կրոնական և ազգային իրավունքների պաշտպանության ու հանդուրժողականության առումով: Դեռևս շարունակվում են հանցանքներ կատարվել կրոնի անունից: Մենք ուժգնաձայն կրկնում ենք, որ նման գործողությունները պետք է դադարեցնել: Ինչպես նշված է 1992 թ. Բեռլնում (Շվեյցարիա) ստորագրված «Խղճմանքի կոչ»-ի հայտարարության մեջ, «կրոնի անունից կատարված հանցագործությունը հանցագործություն է՝ կատարված կրոնի դեմ»:

Մենք դատապարտում ենք նրանց, ովքեր բռնություն են քարոզում այլադավանների և այլազգիների նկատմամբ: Նավարարով մարդկային կյանքի սրբությանը՝ մենք հաստատականորեն ընդդիմանում ենք նրանց, ովքեր խախտում են հիմնական մարդկային արժեքները:

Մենք մերժում ենք այն բոլոր գործողությունները, որոնք կեղծ մեկնաբանություններով և ոչ չափավոր ազգայնամոլությամբ աղավաղում են մեր հավատքի հիմնական սկզբունքները: Մենք չենք ընդունում այն հասկացությունը, որ զինված հակամարտության մեջ որևէ գործողություն կարելի է արդարացնել՝ վերագրելով այն Աստուծո: Նման արդարացումը չի կարող խաղաղության առաջնորդել: Մենք սրտհանցում ենք, որ հարակորեն հաստատվի մարդկանց հիմնական իրավունքների մասին օրենքը բոլոր այն երկրներում, որոնք ներկայացված են այս կոնֆերանսում, և ցանկանում ենք բոլորին հորդորել, որ պարզաճ հոգաբար-

րություն ցուցաբերեն փաստաբանականների, տեղահանվածների նկատմամբ և սկսվորեն պաշտպանեն փոքրամասնություններին:

Միջազգային առաքելչության աղերք, որ սղաւաղում է մեր միաստվաժային կրոնների բարոյական սկզբունքները, ահագնացել է 1994 թվականից ի վեր: Մենք դատապարտում ենք նրանց, ովքեր ներգրավվում են նման հրեշավոր հանցագործությունների մեջ՝ որպես սևօրեն մարդասպաններ, և կոչ ենք անում բոլոր կրոնական առաջնորդներին՝ հաստատականորեն արտահայտվելու նրանց դեմ:

Կարևոր է հիշել, և մենք ցանկանում ենք բոլոր հավատացյալներին հիշեցնել, որ բոլոր միաստվաժային կրոնների Սուրբ Գրքերը խաղաղությունը համարում են որպես գերագույն արժեք և կոչում: Ինչպես նշել ենք 1994 թ. «Նրա ճանապարհները խաղաղության ճանապարհներ են», «Երանի խաղաղարարներին, որովհետև նրանք պարբ է Աստուծու որդիներ կոչվեն», «Աստված դեպի Խաղաղության բնակարան կանչեց» (“Allah summoneth to the abode of Peace”):

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին